զգալի(ն զարձոյ զ)վնասակարս քո ծառայի Կիրակոսի վարդապետի եւ անլոյծ կապեա ի շղթայի այժմ եւ յաւուրն ապագայի ամէն։ Ես ի յերկրի զնա կապեցի ըստ հրամանի որ ի քէն առի եւ դու ի յերկինս անլուծանելի ամէն ։*

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 81.

Ձեռ. էջմ. No. 182/206.

Բ. Գրքի եր. 225, 226, 227.

Աստուածաշունչ, կաշէկազմ, մագաղաթ, պատկերազարդ. 26×19 սմ., ընտիր մագաղաթ 25,8×17,8 սմ. ընտիր բոլորգիր, երկսիւն 22×6 սմ., ներքին ծանօթութիւններով միասին։ Թերթ. 589։

113ա ԶՍտփ. աղաչ. յիշել ի տր.։

166բ. Ո՜հ աղաչեմ արտաքոյ դնել մեղադրանաց, զի եւ դու զկարն պահանջես. ով մեծ բաբունապետդ բոլոր Հայաստանեաց եւ հայր մեր հոգեւոր Եսայի։

191բ. Զգրիչս ապիկար յիշեա ով խոհեմ ընթերցաւղ։

Եւ զպետս վարժից ապըն Թորգումայ (s!) Եսայի։

296բ. Ստացող Եսայի յիշ.։ Իւր ձեռքով։

305բ. Զնուաստ Եսայի սպասաւոր բանի, ստացող Ածաշունչ. կտակիս մի մոռանայք յիշմամբ ի բարիս։ Իւր ձեռքով։

347բ. Զստացաւղ սբ. տառիս զմեծ բաբունապետն Եսայի աղաչեմ յիշել աղաւթիւք եւ Ած. զձեզ յիշէ. ամէն։

354ա. Զստացող սորին Եսայի յիշեցէք ծնողօք եւ վարդապետօք։ (Իւր ձեռքով)։

497ա. Դեղին յատակով (ֆոնով), յետոյ ոսկւով ծածկած.

Զվարդապետս սիրունական
որ սրովբէիցն է ըղձական.
Եսայի Ածաբան.
եւ առաջնոյն համայնման.
Նկարարաւղիս եւ անպիտան
որ աշակերտ եմ անարժան.
Հոգովս եմ եղկական
եւ մարմնովս յոյժ ցաւական
հայցեցէք աղաւթական
իմ յանցանացն թողութի.։

512բ. Ո՜հ, ո՜հ, աղաչեմ զողորմելի մեղաւք գերիս յիշեա զԿիրակէ եւ զքաղցրիկ ծնողսն իմ, եւ որք յիշեն, յիշեալ լիցին ի Քէ. ամէն ոխս։

*Մի յետին գրիչ իւր սրբագրութիւններով եւ յաւելումներով փչացրել է այս յիշատակարանը. այդ մասերը թողնում ենք առանց ցուցման։

541բ. Ո՜հ, ո՜հ, աղաչեմ պատահեալսդ Ածաշունչ. կտակիս զմեղաւք լցեալ հոգիս զԿիրակէ եւ զքաղցրիկ ծնաւղսն իմ յիշել ի մեղաց թողութի. եւ որք յիշեն յիշեալ լիցին ի Քէ. Ալ. մերոյ. ամէն, ոխս։

550բ. Զնուաստ գծող Յոհ. սպասաւոր բանի յիշ.։

588բ. Զածեղէն .զանձիս ստացօղն զերջանիկ վարժապետն Եսայիաս յիշեսջիք ի Քս.։ Ընդ նմին եւ զնուաստ գծօղ սորին զՅոհ. սպասաւոր բանի Եզնկայեցի, որ եւ Ծործորեցի հանդերձ ծնողօք։ Որ եւ գրեցի զսա յըստ մեզ մարդեղուե. թուին Ցի. Քի. տն. մերոյ ՌԳՃ եւ ԺԸ։ եւ ըստ Խոսրովային տոմարին. ՉԿէ։*

Եւս եւ զանարժան նկարագրող զԹոր. եւ զծնաւղն մեր։

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ. 82.

Ձեռ. էջմ. No. 1429/1419.

Բ. Գրքի 230, 231. տ. պատկ. 223.

81ա. Յամի Զ. երորդի Կ. երորդի. Է. երորդի յանկ ելեալ աւարտեցաւ տառս այս որ է տեսիլ սրբոյ աւետարանչին Յովհաննու, ձեռամբ անպիտան գրչի կրսեր համբակի եւ պատանեկի Եփրեմի. հրամանաւ իմոյ սնուցողի եւ վարդապետի Մարտիրոս սրբասէր եւ ճգնազգեց. կրաւնաւորի, նաեւ սպասաւոր բանի, զոր ետ գրել զսա բազում ըղձիւ եւ փափագմամբ սրտի. վասն իւրոյ աւգտի եւ պայծառութի. մանկանց սիոնի. եւ ի խրատ առահակ եւ անվարժ մտաց. զի սովաւ լուսաւորեսցին խաւարեալքն մտաւք։

Արդ որք աւգտիք ի սմանէ եւ լուսաւորիք, աղաւթիւք խնդրեցէք յԱյ. ողորմութի. ստացաւղի սորա Մարտիրոսոյ եւ ծնողաց սորա տալ զանթառամ պսակն եւ զանանց բարութին.։ եւ ես անպիտան գծողիկս Եփրեմ յերես անկեալ աղաչեմ յիշել զիս եւ զիմսն ամենայն, զի եւ դուք յիշեսջիք ի տէ. Այ. ամէն։

130ա. Յանկ ելեալ աւարտեցաւ մեկնութի. աղաւթական բանից Ածաբան. աւետարանչին Յովհաննու (ի խնդրոյ Ստեփանոսի վարդապետի Յակոբցոյ ի Ներսիսէ աշակերտէ իւր եւ հոգեւոր որդեկէ)** ի թուիս ՉԿԼ, ձեռամբ ապիկար եւ փցուն գծաւղի Եփրեմի, հրամանաւ իմոյ սնուցաւղի եւ ճգնազգեաց կուսակրաւն քահանայի Մարտիրոսի բանի սպասաւորի ի վայելումն անձին իւր եւ յիշատակ հոգոյ եւ ծնաւղաց իւրոց. արդ որք աւգտիք ի լուսաւոր բանիցս, աղաչեմ յիշել զմեզ աղաւթիւք սովորականաւք յաւարտման գրոցս առել Քս. որդի եւ յիշել առաջի զենլոյն անմահ գառինն. զՄարտիրոս վարդապետն իմ եւ զՅովաննէս քահանայ, որ է իմ արենառու եւ զՈվհաննէս ընկեր նորին

*Զպէտք է շփոթել գրիչ Յովհաննէս Երզնկացու հետ։

**Աւելացրած է փակագծինը մեր կողմից, անձը յայտնի կացուցանելու համար։